

“Droschak”

ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

43.7. ԲՈՒԲՈՒՆ
Rédaction du “Droschak”
GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԴԱԻԹԵԱՆ

(ԽԱՆ)

1870 — 1896

—o—

Խանասորի անեղ կուռւմ, մենաւոր Արաուլի ստորուտում զէնքը ձեռքին զինւորի մահով ընկաւ Խանը:

Վերջն ատիճանի մեղմ եւ զիջող էր ընկերների հետ եւ վրէժխնդիր ու անողոք թշնամու վերաբերութեամբ, ահա նա Դպրոցը չէր, որ պատրաստեց նրան յեղափոխական կեանքի համար, եւ ոչ էլ այնպիսի չրջապատը, որ շատ անգամ մարդուն ակամայ հրաւիրում է այդ ասպարէզը, այլ նրան պատրաստողն եղան իր հայրենիքի լեռներն ու որջերը, որոնք ամէն անգամ խոր էին խոցում նրա սիրտը:

Նա Ղազախեցի էր. Թալուզ գիւղից, որտեղ եւ պայտարութեամբ էր պարանայում:

Հեռու տաճկական Հայաստանում կատարւած սարսափները, հարազատ քոյրերի լիկելը եւ անմեղ մանուկների մորթւելը նա լսում ու իրեն անարզւած էր համարում. ուզում էր թռչել, գնալ այնտեղ, «Հայաստան» եւ տեղն ու տեղը վրէժ առնել այդ ամէնի փոխարէն. բայց ո՛ւր էր այդ Հայաստանը, նա չգիտէր, նա միայնակ էր:

96 թ. գարունը նրա համար աւետանայ տարի էր. այդ ժամանակ Ղազախում յայտնեց Դաշնակցութեան անձնէր զուակներից մէկը. նա եկել էր մարդիկ հրաւիրելու կուրի փրկարար դաշտը: Խանը, որ վաղուց լսել էր դրա մասին, առաջինն եղաւ, որ թողեց մուրճը, հրացանը առաւ ու հետեւեց նրան, թողնելով տանը իր անուջական ծնողներին, ընդհանուրի սէրը մասնաւորից վեր դասելով: Իզուր էր աշխատում նա ծերունի հայրը ճանապարհի կէտից նրան յետ դարձնել. նա անընկճելի էր: Նոյն թուականի ամռան արդէն նա Թուրքի էր Դավաթութիւնները յաղթահարւած էին. նա իր ուզած երկրի տանձանի վրայ էր. Բայց որովհետեւ մինչեւ ցանկալի րօպէն զեռ լաւական ժամանակ կար, նա

նւիրեց փամփուշտ պատրաստելուն ու այդ համեստ գործով պակաս օգուտ չուեց տեղական կոմիտէին, որն այդ ժամանակ արագ-արագ յաջորդող դժբաղդութիւններից ու նորանոր խտուրթիւններից՝ տարակուսել էր: Խանը պակաս չէր նպաստում եւ փոխադրութեան գործին:

Օգոստոս ամիսն էր արդէն. Վանի կոտորածին յաջորդել էր սոսկալի անորոշութիւն. Դաշնակցութիւնը իր ազդարար խմբից յետոյ պատրաստում էր մի նոր խումբ այդտեղ ուղարկելու, եւ ահա Խանը ամէն ջանք գործ դրեց այդ խմբին միանալու. նա գնաց: Իր քաջութեամբ, համարձակութեամբ եւ ճանապարհները հեշտ որոշելու ընդունակութիւնով պակեց այդ խմբի կռիւները եւ սիրեց ու յարգեց իր ընկերներից: Վերադարձին կր ճանապարհի առաջնորդներից զրկւած, խումբը մնացել էր կորստաբեր վտանգի մէջ, Խանն իր վրայ առաւ առաջնորդի ծանր ու պատասխանատու դերը եւ փրկեց ամբողջ խումբը:



ԿԱՐԱՊԵՏ ԴԱԻԹԵԱՆ

(ԽԱՆ)

Քաջի կորովին սահման չկայ. նա իր հանգիստը վտանգների մէջ է որոնում. Յոգնած խումբը զեռ նոր էր վերադարձել եւ ահա Խանը պատրաստեց երկրորդ խմբին մասնակցելու. բայց հանգամանքները փոխեցին եւ խմբի գնալը յետաձգեց: Այնուհետեւ Խանին վիճակեց սպասել մինչեւ եկող ամառը. այդ երկար ժամանակամիջոցում, երբ Խանը ոչինչ չուէր անելու, կազմակերպութեան վրայ չձանրանալու համար, սկսեց արհեստով պարապել՝ կերակրելով իր այխատանքով հաւել իր ընկերներից մի քանիսին:

* *

97 թ. յուլիսի արշաւանքն էր պատրաստում: Խանը անդադար գործում էր, իր հայուկ ընկերներին վարժութեան տանում, հարկաւոր նիւթեր էր գրնում. պատրաստները բաժանում իր ընկերներին, մի խօսքով. աշխատում էր մեղուի նման. «իմ դարդն էս» ասում էր նա, ըստեղից մի էն սարը հասնեք, փթեցինք»: նա ցոյց էր տալիս Արաուլը:

Այդ օրն էլ հասաւ, նա յինսպակտի օգնականի

պաշտօնով մասնակցեց արշաւանքին: Կուր տեղում նկուեց թշնամու վրանների մէջ եւ հէնց այնտեղ զո՞քնաց, երբ արդէն թշնամու վրանները կրակ էր տւել: Ինչպէս զիսկը մենակ չէր, ալ ու ձախ քրդեր էին թափւած:

Քո «վրէժ» մրմնջող ձայնը լսում ենք, անմոռաց ընկեր եւ գալիս ենք քո ետեւից, հանդիսա եղիր...

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԹԻՒՐԿԻԱՆ

«Մենք կոչ ենք անում մեր բոլոր հայրենակիցներին առանց խորութեան ցեղի ու կրօնի համախմբել ու միանալ ընդհանուր լեզնամու դէմ», — այս խօսքերն ենք կարդում վերջին թիւ «Օսմանլի»-ի մէջ, որի վարիչներն են Երիտասարդ Թիւրքիայի երիտասարդագոյն ներկայացուցիչները:

Միտքը թարմութիւնից զուրկ չէ, ընդհակառակը, նա վերին աստիճանի կենսական է այսօր: Երիտասարդ Թիւրքիայի մի մասի այդ կոչը, որ ուղղած է տաճկահայտակ յեղափոխականներին, ուրախալի է մեզ ոչ միայն այն պատճառով, որ նա միութեան հրաւեր է կարդում, այլ և այն պատճառով, որ այդ կուսակցութիւնը — գէթ նրա մի մասը — ըստ երևոյթին որոշել է թողնել ընդմիշտ իր կրօնական դիրքը և մտնել գործօն շրջանի մէջ: Յուսանք, որ սխալած չլինենք:

Մենք մինչև օրս սովորել ենք սկեպտիկորէն վերաբերել դէպի Երիտասարդ Թիւրքիայի ուժը, դէպի նրա բռնած ընթացքը, դաւանած սկզբունքներն ու բարենորոգչական լըջութիւնը: Տարիների փորձն էր այդպէս համոզել մեզ: Մենք չտեսնէք, որ քսան տարւայ ընթացքում այդ կուսակցութիւնը երբ և իցէ փորձէր գործով բողոքել այն անլուր անարդարութիւնների և մինչև երկինք աղաղակող ոճիրների դէմ, որոնց հեղինակն էր թագակիր Մարդասպանը: Մենք չտեսնէք թիւրք յեղափոխականներ, մենք միայն տեսնէք թիւրք «ազատամիտներ», «խաղաղականներ»: Իսկ դրանցից մեզ մտ էլ շատ կան: Չգուցիկ ենք անպատու յիշատակագիրներից, գզել ենք Եւրոպայի առաջ խնդրելուց ու աղերսելուց, ողբալուց ու հառաչելուց, ազատութիւնը մուրացողից գարշում ենք մենք, դա և ցնորական է, և ստրկական ու անպատու բեր:

Այո, քսան տարի գոյութիւն — և անպտուղ: Երիտասարդ Թիւրքիայի քարոզած գաղափարները դժբաղդաբար չկարողացան լայն հող բռնել թիւրք ժողովրդի մէջ և ստեղծել հանրային շարժում: Նրանց ծրագիրն էր ուսուցիական: «Յեղափոխութիւնը վերուստ պիտի գայ» գոչելով, նրանք մի հսկայական սխալ գործեցին: Նրանք չիմացան, որ պատմութեան մէջ յեղափոխութիւնները երբէք ի վերուստ չեն առաջացել չեն կատարել բըռ-

նաւորների յօժար կամքով ու նախաձեռնութեամբ: Նրանք չհասկացան, որ բռնակալութեան մարդասիրութիւն ու արդարութիւն քարոզել — միևնոյն է թէ հրահանգել քսուուն, որ նա կանգ առնէ, կամ փոխէ ուղղութիւնը: Արդիւ Համիդի վրայ չազդեցին ոչ նըրանց աղերսագիրները, ոչ պրօկլամացիաները, յորդորներն ու սպառնալիքները: Եւրոպայի վրայ էլ չազդեցին... Եւ քսան տարին անցաւ Երիտասարդ Թիւրքիայի համար դժգոյն ու տարտամ...:

Սակայն այսօր մենք ուրախ ենք յիշատակելու, որ այդ կուսակցութիւնը ամբողջապէս չի յամառում իր նախկին անշարժութեան մէջ, որ նրա միջից բաժանւած են թարմագոյն տարրերը, որոնք աւելի արմատական գաղափարներ են դաւանում և խիզախում են զրկել կարմիր յեղափոխութեան դատը: Այդ տարրերն են, որ մեզ համերաշխութեան հրաւեր են կարդում:

Մենք համերաշխութեան գաղափարին բարեկամ ենք եղել միշտ և միշտ քարոզել ենք, վկայ է մեր ծրագիրը, մեր գործունէութիւնը, վկայ են մեր ութամեայ օրգանի էջերը: Մենք միշտ քարոզել ենք մեր ժողովրդին, որ իր մահացու թշնամին Ելլըզլի կառավարութիւնն է իր զօրքերով, վալիներով ու փաշաներով, գայմագամներով ու զափտիաներով: Մենք գիտենք, որ մի ժողովուրդ կարող է լինել լաւ բնազդունների տէր, իսկ իր զաւակները, դաստիարակելով զինւորական նողկալի ռեժիմի տակ, կարող են դառնալ վայրագ գազաններ, եղբայրասպաններ: Մենք նոյնիսկ հայկական կոտորածների ահաւոր վայրկեաններին հրատարակել ենք, փաստերի վրայ հիմնւած, որ այդ կոտորածների սատարողն ու գործադրողը եղել է գրեթէ բացառապէս պաշտօնական Թիւրքիան՝ սիլնքոր ու ծախու խուճանի օգնութեամբ, որը ամէն տեղ կայ դժբաղդաբար և ոչ մի տեղ սրբութիւն չի ձանաչում: Եթէ ազգայնական որոշ անտագոնիզմ (հակամարտութիւն) կայ այսօր տաճկի ու տաճկահայի մէջ — դա գլխաւորապէս կառավարութեան շնորհիւ է: Եւ մենք հաւատում ենք, որ ապագայում, երբ քաղաքական հանգուրժելի պայմաններ կը ստեղծւին Թիւրքիայում, երկու ազգութիւնները կը շարունակեն ապրիլ հաշտութեան ու անդորրութեան մէջ և ընդհանուր ջանքերով կը դիմեն դէպի բարձրագոյն քաղաքակրթութիւն: Այդ հաւատքով է ներշնչւած մեր կուսակցութեան ծրագիրը: Կրկնում ենք, մենք երբէք չենք զլացել հնարաւորին չափ համերաշխութեան պրօպագանդն անել Տաճկահայաստանի տարբեր ազգութիւնների մէջ և փոյթ չէ, թէ Երիտասարդ Թիւրքիայի զառամեալ ներկայացուցիչներից ոմանք, որ բնաւ ծանօթ չեն մեր գործունէութեան, ինսինուացիաներ են լարում մեր դէմ, հայ կոմիտէներին «Թիւրքական փիղերը կործանողներ» ցոյց տալով... ամբողջ Եւրոպայի առաջ և հայ յեղափոխականների երեսին «անջատական» (separatiste) խօսքը շարտելով:

«Օսմանլին» հրաւեր է կարգում մեզ. մենք սիրով ընդունում ենք այդ հրաւերը, ինչպէս որ սիրով կընդունենք ընդհանրապէս համերաշխ գործակցութեան ամէն մի առաջարկ, որ կը բղխէ անկեղծ, անկաշառ ու գործօն յեղափոխական կազմակերպութիւններից: Պարոններ, դուք անտարակոյս, անդրդուելի կերպով վճռել էք թողնել հին զառանցանքները, չափաւորութիւն, դանդաղ առաջադիմութիւն, էւօլիւցիա և այլն տարտամ բառերը, որոնցով ձեր պառաւագոյն եղբայրներն են խմորւած: Մեր, հայերիս մէջ էլ կան ծակ փիլիսօփաներ, որոնք իրենց «էւօլիւցիօնիստ» են անւանում և փախչում են յեղափոխութիւնից: Բայց էւօլիւցիան մի անեղբ հասկացողութիւն է, որ ամէն մէկը, նոյնիսկ անսանձ բռնակալը, քաղաքական և այլ ծրագիրներ կազմելիս, կարող է շահագործել իր օգտի համար: Դուք քաջ գիտէք, որ բնութեան մէջ անգամ էւօլիւցիայի յամր ընթացքը մերթ ընդ մերթ ընդփշուում է երկրաշարժի, հրաբուխների կատաղի ժայթքումներով, որոնք, անշուշտ, նոյն էւօլիւցիայի որոշ վայրկեաններն են միայն. այդպէս է նաև մարդկային պատմութեան մէջ դուք գիտէք, որ դաշափարը անողորմ է, որ նա առանց մարդկային արիւնի չի յաղթանակում: Նայեցէք պատմութեան: Դուք կը տեսնէք, որ եղել է մի ժամանակ Երիտասարդ Փրանսիա, ապա Երիտասարդ Գերմանիա, Իտալիա և այլն, որոնք ամենքն էլ բռնակալութեան դէմ ազստամբելով, գաղափարի հետ միասին սուր են գործ դրել արիւնագոյն դրօշն են ծածանեցրել: Դուք տեսնում էք և Երիտասարդ Հայաստանը, որ անտեսական ու քաղաքական զարհուրելի պայմաններից մղւած, պատմական վայրկեանին յարմարելով, ձգտում է յեղափոխական մաքառման միջոցով խորտակել իր մահաբեր շղթաները: Դուք տեսնում էք այդ Երիտասարդ Հայաստանը, թափանցւած համամարդկային գաղափարներով և բաւականաչափ մարզած անձնւորութեան ու կեանքի դպրոցի մէջ, մտել է իրական ձանապարհը, որ սրի ու արիւնի ձանապարհն է, և, մարտնչելով արտաքին ու ներքին թշնամիների դէմ, կրօնի ու խաւարապաշտ հոգևորականութեան դէմ, ազգային սրբագործւած նախապաշարմունքների ու անհրապահութիւնների դէմ, անզուսպ սլանում է դէպի ազատութեան նւաճումը և քարշում է իր հետ հայ ժողովրդային ընդհանրութիւնը դէպի յեղափոխական մարտադաշտը: Սթափեցրէք դուք ևս ձեր հարազատ ժողովրդին, որի ցաւերն ու դառնութիւնները ինքներդ լաւ կըմտնէք: Նա էլ տանջւում է, այդ անբաղդ ժողովուրդը, նա էլ հեծկտում ու ան է քաշում... Ստրուկ, որ ուրիշ այլաբաւան ստրուկների պէս ինքն էլ մշտապէս ծռել է պարանոցը արիւնակից բռնաւորների ու հարստահարիչների առաջ: Նրա տանջանքը թուլ մորմնը է միայն ծնեցնում, և թերևս անպագայ ահարկու վտթորիկների կայծեր... փչեցէք այդ կայ-

ծերը, հրդեհեցէք: Յաճկութիւնը, ինչպէս առհասարակ կուտուրապէս ստոր կանգնած ամէն մի հասարակութիւն, էպպէս նորատեսաց է: Դժբաղդաբար ձեր հոգևորականութիւնն էլ Ղուրանի անունով աւելի ևս արմատացնում ու նւիրագործում է նորատեսացութեան երևոյթը (misonéisme): Դուքս բերէք ժողովրդին այդ մեծելական անշարժութիւնից, հրեցէք նրան դէպի գործօն կուր ընդդէմ իր կառավարութեան, դէպի ղինւած ու կազմակերպւած կուր: Բացատրեցէք նրան տիրող այլանդակութիւնների իսկական պատճառները, որոնք, անշուշտ, միմիայն մի Աբդուլ Համիդի կամ իր շրջապատի քմահաճոյքների մէջ չեն թաղւած. լուսաւորեցէք նրան մեր ծրագրի ու ձգտումների նկատմամբ, արծարծեցէք մեզ նման փոխադարձ համերաշխութեան գաղափարը. անհատական բողոքներին, որոնք ձայն բողոքոյ են մնում, թող հետևէ խմբական շարժումը. իսկ այդ այն ժամանակ կը լինի երբ կարճ կը կայէք ծայր. անպտուղ գաղափարի պրօպագանդի հետ և կ'անցնէք կ'են դ'ան ի գ'որ ծ ի պրօպագանդին, երբ կը թողնէք թողթային ապարդիւն ուժակոծութիւնը և իրական ուժերով կը ղինէք: Խօսքը անհրաժեշտ է, պարոններ, բայց անհրաժեշտագոյն է գործը: Մի փոքրիկ քայլ գ'որ ծ ի ա կ ա ն ի մ է ջ անհամամատ աւելի արժէք ունի, քան տասնեակ ծրագիրներ, բրօշուրներ ու պրօկլամացիաներ: Գ'որ ծ ի պ'ր օ պ'ա գ'ա ն դ'ը թող չսարսափեցնէ ձեզ. և մի վարանէք զառանցական Ֆրանկների առաջ, թէ «Եւրօպային հաճելի չէ յեղափոխութիւնը, թէ նա հակառակ է գործով պրօպագանդին»: Եւրօպան բուրժուազական է, այդ բուրժուազիան երբեմն ինքն էք ջատագոյնում ուժերն ու յեղափոխութիւնը, իսկ այսօր, նա իր շահերից դրդւած, դատապարտում է այն... փոյթ չէ. սուլթանը, պարոններ, անողորմ հալածանք է սկսել ձեր դէմ և մեր դէմ. չընկճիք, սաւարացըրէք ձեր շարքերը, գումարեցէք բոլոր անկեղծ յեղափոխականներդ և... ձեռք ձեռքի տանք: Թող, որ թէօրիայի մէջ մենք կարող ենք լինել տարբեր իրարից, բայց մենք ունինք մի ընդհանուր և մահացու թշնամի, որի դէմ կը մարտնչենք ընդհանուր ուժերով, դա Աբդուլ Համիդի ուժիմն է:

Ն Ա Մ Ա Կ Խ Ա Ր Բ Ե Ր Գ Է Ն

19/31 մարտ 98

Գարունը կը բացւի ու տաքուկ արևուն ծիծաղ շողերով սև առիթի տակէն դուրս կուգանք ծիծեռնակի, թռչուններու ձուլողիւնը լսելու. հայ երկրագործը բըղեղին ու միջատին առաջին ճպլտուրէն առաջ բանրօսը դեռ իր գլուխը հողին տակէն դուրս չհանած, դաշ-

տին վրայ կերևի իր արօրովը: ու տենդոտ աշխուժով գարնան ցանքը կընէ. իբր թէ վաղւան հունձքը իրը պիտի ըլլար ու պատրաստուած հացը ինքը պիտի ուտէր: Ակամայ ափսոս մը կը թռի մարդուն բերնէն. հայ մը շակը շատ լաւ գիտէ թէ ոչխարին մեծցուցած գառնուկը գայլը կուտէ, հաւուն ձագուկը ուրուրը կը յափշտակէ. սակայն ինչ ձար, աշխատութիւնը օրհնեալ է հայ աշխատաւորին համար. հոգ չէ թէ անոր վաստակը օտարին պիտի չըթնները խլեն ու յետոյ ինքը ձեռքը երկնցնէ օտարին:

Գարնան նաւակատիքին, ու գիւղացուն երդիքին վերայ արևուն ձառագայթին հետ, յոյսի աղօտ այլ դառն նշոյլ մընալ խաղաց. առունները ազատուած սառերու կաշկանդներէն, արևկող տեղեր, հոս հոն, ջրի մամուռներ, առևի-կարոս ու թրթնջուկ դաշտեցիին կարօտ հացին պատառը կը լեցնեն. թափուած հազարաւոր նպաստի ոսկիները բանի մը չեն ծառայեր, երբ հաշալ վաստակը տուն չի գար ու տուն չի շիներ: Ողջ մնան գեղացուն եղն ու գոմէշը, բահն ու բրիչը: Սակայն անսիրտ դեւ-կառավարութեան բերանը չօրնար: Գաշտաբնակ գեղերէն շիտակ անցիւր, ու հատիկ հատիկ հանդպած տուններէն ներս երկնցուր գլուխդ, աղքատութիւն, աղքատութիւն: Ամբողջ կեանքեր դաշտի խոտին ու ցամաք հացին երեսը կը դողան:

Աս ալ կեանք է, է... Միայն նիւթական զբկանքն ու կարօտն ըլլար. բարոյական կսկիծները հապա...

Պէկեր ու պէկերու լակոտներ կատարած դազաններու փոհմակի պէս գիւղական հասարակութիւններու մէջ քարը ինկած են: Հայ կոյսերու պատուոյ հաշիւները պահանջէր... Հաճի Պէկոնէն և իր փիճերէն: Զինուոր, ոստիկան աստծուն օրը գեղացիին տունէն պակաս չեն, ուր մնաց հասփտական բարենորոգութիւնները. իրերու ահռելի վիճակը իր զէնիթը հասած է. հայուն տարւան պաշարը ուտելէն, խմելէն և ձիւնին ալ կշտացնելէն ետքը, կը ծեծեն ու կը խոշտանգեն ալ անութի, թշուառ ժողովուրդէն դրամ, անվերջ ծայրը ձօթը չհասած հարկ պահանջելով: Այս պահուս 13 տարւան յետնորդ տուրք կը ժողովեն դաշտէն: Ո՛վ, մեծդ պուլթան, խաբբայ դիւանագէտներուն առջև որքան ծիծաղելի են ձեր կատակախաղերը, հայուն երեք տարւայ տուրք շնորհեցիր, է, և 13 տարւան տուրք կը պահանջես: Քսան տարւան թագաւորութիւնը չէ սորվեցուցեր, կայսերական վեհափառութեանդ, այն բարեխղճութիւնն ու բարոյական արժանապատուութիւնը որ վեհապետները պէտք է դգան իրենց հպատակներուն, նկատմամբ: Արգեօք, դո՛ւք ալ Ատտիլայի ներշնչումը ունեցաք և ձեր հոգիին խորէն ըսիք՝ «ես ալ պատուհաս մը պիտի ըլլամ աշխարհի»:

Գրութիւնն այսօր այնքան անտանելի կը դառնայ, որ հեզ ու հաւատարիմ թիւրք ժողովուրդն իսկ, կացութեան վրայ անդրադառնալ կըսկսի: Բողոքներ Խարբերդէն, բողոքներ Եօզղատէն, Մալաթիայէն ու այս ամէնը ուղղւած, անբարոյական կառավարութեան մը և իր ընթացի գէմ: Իրողութիւն մըն է թէ փտութիւնը արմատէն, շատ խորէն սկսած է:

Խարբերդ, ժամ մը հեռաւորութիւնով, երկու մասի բաժնուած ըլլալով հին քաղաքը լեռան վրայ և նորը՝ Մէլիքի անտունով դաշտին մէջ կը գտնուի, ուր կը գրտնուին կուսակալն ու զօրանոցը: Խանութի, ստացւածքի

մեծագոյն մասը հին քաղքին մէջ թիւրքերու սեփականութիւնն եղած է: Զարդի թւականէն ետքը, երբ հայ վաճառականն ու դրամատէրը Մէլիքի քաղքեցան, և առևտուրի մղումը իրենց հետ տարին, թիւրքերը դառն հիասթափում մը և իրենց գործած աւերին գիտակցութիւնն ունեցան — յստակօրէն տեսան թէ իրենց ձեռքով տուններին քանդած էին: Գարսկած իսանութները, ահագին անկում կրեցին, այնպէս որ կալածատէր, ու հասութեան թիւրք հասարակութեան մեծամասնութիւնը, սոսկում և զժկամակութիւն մը զգաց իր գոյութեան աղբիւրը ցամքած տեսնելով: Փաթոտցներու ու ողջտ խրգաններու տակէն իր աւուրի խնդիր մը դուրս ժայթքեց, յուզում մը՝ որ երթալով մեծցաւ: Քաղքի թիւրքին հոգն է որ կուսակալանիստ Մէլիքիէն հեռու ինկած քաղքին մէջ գայ մա գ մ ու թիւն հասաատի, որով թիւրք սեփականութիւնները առևտուրի բերումով գին գտնեն նորէն: Կառավարութիւնը իր ծակ գանձարանին վրայ նայելով սկիզբէն ի վեր միշտ ժխտող, միշտ մերժող եղած է: Յիսուն ոսկի դրամ գնաց Պօլիս հեռագրի համար, բայց վերէն ոչ մէկ պատասխան տրւեցաւ: Պահանջող մասին ուժ կուտար տեղիս խատիւն որ հէնց ճիշդ այսօր հասած հեռագրով պաշտօնանկ եղաւ: Կիմանանք թէ, թիւրք հասարակութիւնը, իր նպատակին հասած չըլլալուն, գիշերանց Մէլիքիէն վրայ յայրաձակիլ կը ծրագրէ եղեր. ջարդել հրդեհելէ յետոյ, քաղքի հայ հարուստներէն ալ բռնի որոշած գումարներ առնել ու գայմագամութիւնը զօրով վեր հանել: Յայտնի չէ ինչու չգործադրելի այդ խորհուրդը: Ատանգն անցած չէ դեռ, վայրկեանէ վայրկեան կրնայ պայթիլ: Իսկ թէ գայմագամութիւնը որքան օգտակար պիտի ըլլայ քաղքիին, թիւրքին համար այդ ամէն տարակոյտէ վեր է:

Գարով հայուն, բնական է որ հայը միշտ վնասով դուրս պիտի ելնէ: Կառավարութիւնը կազմողները պիտի ըլլան այլևս սօֆթաները ու հօճաները և կառավարական պաշտօնատունը պիտի փոխադրուի նեխած հիւճրէն երբ, ուր խեղճուկ հայը շատ աւելի թանկ ուղղակ է զն եր ո վ պիտի երթայ Պէկ Օղլի կամ Հաճի Մուհամետ էֆէնտի քուրմերէն կողկողանքով միշտ իր պատգամն առնելու:

Առևտուր, վաճառականութիւն հոգեվարքի մէջ են, եթէ ոչ մեռած: Իսլամին ու քրիստոնէին մէջև վատահոութիւն հաստատել անկարելի է: Գողութիւնը ամէն ատենէ աւելի շատցած. խենդութիւն ու մարդասպանութիւնը յաճախադէպ:

Փոթորիկ մընէ որ կանցնի, հաշիւը ետքէն յայտնի կըլլայ

Ն Ա Մ Ս Կ Բ Ա Լ Ո Ւ Է Ն

28/0 մարտ 98

Բալուն ունի 40 հայ գիւղեր, որոնք պէտքերու և աղաներու ձեռքով կը կառավարին, որոնց նշանաւորներն են այժմ Նէճիպ և Շէրիֆ պէյեր իրենց բակտաներով: Երկուքն ալ հայ գիւղացիին արիւն քրտիկը ծծելով կապրին: Կառավարութիւնը իրենց փին մէջ

ըլլալով, անվախ ու աներես ամէն բարբարոսութիւն ու խժոժութիւն կը գործեն: Երբեմն շունուկատու են իրարու հետ — թէև զոհը միշտ հայն է — սակայն ներկայ պարագային ձեռքձեռքի տաճ, համերաշխօրէն կը ճնշեն և կը չարչարեն տնտեսապէս քայքայած ժողովուրդը, անլուր և վայրագ միջոցներով կը սրբապղծեն, ու ոտնակոխ կընեն անոր ամէնէն բարոյական զգացումը ու արժանապատուութիւնը: Այն անոր որ ձիկ մը հանէ. բերան բանալու չեն թողուր, կամ սուրը պատրաստ է քեզի համար կամ հոտած բանտերու փոսը, ուր թաց ու մղած գետնին վրայ տարիներով պէտք է ձգնէ թշուառ զոհը:

»Արդարութեան խախտման» բարեսիրութեան ու բարեգործութեան հզոր ապացոյցներն են ատոնք...

Պէտքեր ու արաններ — ո՞ր թուրքը կամ քիւրդը պէտք կամ աղա չէ — դեռ չեն կշտացած հազարաւոր անմեղներու արիւնով. ակռանին հայու մտի համ անցաւ, ալ անհնար է այդ բորենիներու բերանը կապ դնել իրենց ոճրագործութիւնները »քաջագործութեան» համբաւը կը վայելեն արդէն: Առաւմտութիւնը — այդ եղբունագործներու վոճմակը — աչք կը խփէ եղածներուն և դաւաճին չորս կողմերը սուտ խուզարկութիւններ ու հետազոտութիւններ ընելով աչալուրջ երևնալու աչքկապութիւնը կը խաղայ:

Մէկ երկու օր ետքը կը տեսնես քանի մը անմեղ հայեր ձերբակալուած են... այդ ոճրագործութիւններուն իբր հեղինակ կամ մեղսակից...

Երբ գայլն է դատաւորը... Հէգ ժողովուրդը անշարժ կալածներէն զատ հազարաւոր զոհերու հետ մէկտեղ ունեցածը չունեցածը կորսնցնելով, մօրէմերկ մնաց Բայց որովհետև տեղացի քրդեր ու թիւրքեր Փրսանդ կը սեպեն սուլթանին իրենց շնորհած հայերուն արիւնը քամելու լիագօր հրամանը, հիմակ սկսած են բռնի և չար միջոցներով անոնց անշարժ կալածներն ալ խլել: Խեղճ հայը ատոր ալ կը համակերպի գլխիկոր, մահաւան սարսուռէն խուսափելու համար, չմտաբերելով սակայն թէ ուշ կամ կանուխ այդ վարքերը պիտի կըլանեն իր խոնջ ու բազմաչարչար մարմինը:



Վ Լ Ա Տ Ս Պ Յ

Դարերու մէջէն ճղելով Պօսիւէի որոտուն արձագանքն է կարծես որ կը հասնի հէգ մարդկութեան ականջին, Վլատսոքը կը մեռնի... Վլատսոքը մեռաւ...

Այդ ոչ անսպասելի գուժին առջև աշխարհ յուզւեցաւ: »Աշխարհի մեծ քաղաքացի»-ին մահը կսկծացին տնանկէն մինչև թագակիրները, որոնք կերևի թէ գիտեն գնահատել լաւ բանը, բայց անընդունակ են գործադրելու:

Արօտ ու որբ ազգութիւնները, մանաւանդ մարդկային ազատութեան սկզբունքը, կորսնցուցին իրենց ամենէն անշահախնդիր ու անվեհեր ակոյրները. և այն պարագային երբ ազգերու շահախնդիր ոսոխութիւնը թև առած, ահուդողի մասնած է մեր չարաբախդ ու

ցաւագար մոլորակը: Քաղաքական սպառնացող ծանրաչափը, դէսու գէն փոթորիկները, խուլ շշկոյցներ, ահարկու հեռապատկերի մը զգայախաբուութիւնը կուտան մեզի: Խլտում մը, մոլեգին գործութիւն մը կը տիրէ արիւնահեղ հարսնիքի մը պատրաստութեան համար, որուն խելայեղ թափին քով խաղաղութեան, արդարութեան ու համերաշխութեան աղաղակները հովին բերանը կերթան:

Երկու պետութիւններ, մէկը վերջալուսին նայող, միւսը արշալուսին, արիւնը գլուխին ցատկած, կը մեծամարտին Ատլանտեանի երկու եղբրէն. մէկը իր հպատակները սպաննելու արդար իրաւունքին վրայ սնդեղով, միւսը իբր թէ մարդասիրութեան սիրուն համար: Ավէտանը կարմրի թերևս, բայց պիտի չկրնայ մարել անոնց թէժ կրքերը որոնք յունական հուրի պէս միշտ պիտի բռնկին...

Եւրօպայի ամուլ ու մուայլ խաղաղութիւնը հոսածաղիկ մընէ, որ փու ընելով մը կը ցրցքնւի: Քիչուր են դեռ պատնէշին ետևը որոնք արդարութեան դրօշակին տակ կը մարանչին, երբ անոնք գոտան, իրաւ է, կը սասանեցնեն գահերը, բայց անոպայ ուժը դեռ կը յաղթահարէ, իր երկաթէ կրունկներուն տակ կոխկուտելով իրաւունքի սրբազան սկզբունքը:

Վլատսոքը իրաւունքի ու արդարութեան պատնէշին անվկանդ մաքառողներէն էր: Մեռաւ: Ա՛յ պիտի ծառէ ժողովուրդներու դատին համար, ո՞ր ձայն աւելի հզոր, աւելի լսելի պիտի ըլլայ տկարին ու հալածականին պաշտպանութեան համար: Իր մարդասէր բազուկներով կը գրկէր վերջալոյսը ու արշալոյսը: Ալ սքայեցաւ իր գլխու ձայնը, ու իր դազաղին ընկերացող տիեզերական համակրանքը, սրտարցունքը ցոյց կուտայ ընկերային խաղաղութեան պապակը:

Վլատսոք, գրեթէ լման դար մը ճամբորդեց կեանքի մէջէն: Իր քաղաքական ու ընկերական դաւանանքները վերջի պահուն միւսնոյն գծին վրայ կը մէկտեղէին: Ար քարոզէր ընկերային հաստատութիւններու վերանորոգում, ազգերու և մարդկային ազատութեան անբռնաբարելիութիւն: Շոգեպինդ կը վազէր բնաշրջութեան դանդաղ ուղիին վրայէն: Խորապէս համոզուած էր թէ ազատութիւնը անմահ է, ան է որ կեանքի կենսականութիւնը կը ծընցնէ ու կը ծաղկեցնէ. ան է որ տիեզերքին հոգի կուտայ: Շատ չընեն, վայը կուտար երկու կայսրերու (Ցար ու Քայզը) որոնք »աշխարհ սարսափի մէջ կը պահեն և կարգիլեն անոր ազատ զարգանալուն»:

Եւ իրաւ, դարձու վեհապետները, հոռոմայեցի կայսրերուն պէս իրենց կուրծքին վրայ Մերուսայի գլուխ մը դրած են...

Կրօնի թրմ հաւատացող, այլ միանգամայն ընկերային բացարձակ յառաջդիմութեան նախանձայոյդ, իր ընկերային իտէալը հասնելով մինչև հանրապետութեան ու ընկերավարութեան սահմանները... Չէր կուէր ապագայի դէմ, իր արօքը անտղին լծած կը քալէր, զի հասկցած էր թէ մարդկութիւնը դէպի լոյս, դէպի կատարելութիւն կը ձգտի: Ար սիրէր մեծ համայնքը, բնութեան մեծ ժառանգորդը. պետական կազմակերպութիւններուն վրայ դեղև ու անյոյս — թերևս արհամարհոտ — նայւածք մը կը նետէր միայն: Մեծ ծերունիին համար ապագան ժողովուրդն էր, որ

շէն կը պահէ աշխարհը և տիեզերական հոգին կը խորհրդանշէ: Չուզեց խաբխի նետել յաշխարհական յառաջխաղացութեան մէջ միշտ քալել քալել... Տե՛ռուն, դէպի միշտ լաւագոյն, միշտ լայն հորիզոններ...

Ամէն անիրաւութեան ու անօրէնութեան դէմ բողոք մը, կշտամբանք մը ունէր, չէր սիրեր որ բնութեան ազատ արևը, սև ցածեր, մարդկութեան ո և է կտորին վրայ: Քաղաքական մեծ տագնապներու ատեն, վարանոտ եղաւ, երբ մարդկային իրաւունքները բռնաբարելու հարկին մէջ կը գտնէր: Մարդասիրութիւնը և դիւանագիտական կեղծիքը, ընդհարումներ կունենային անոր սրտին մէջ. բայց Որմիզըը յաղթանակեց վերջապէս...

Արդիօնի ժառանգողներուն մէջէն, թունդ կելէր երբ ազգերու տառապանքը կը լսէր: Իր ժողովրդականութիւնը գործածեց տկարին պաշտպանութեան համար. իտէպի սաւառնումով ատելութեան աշխարհին մէջ սիրոյ համեմը կը ջանար ցանել խաչելութեան ճամբէն ետ դարձնելով հասարակութիւնը որ վաստակաբեկ կը սքար, քրտնոտ ձակատով դժնէ ու խօլոր աչքերով:

Իբր քաղաքական մարդ միջազգային յարաբերութեան մէջ ունեցաւ սրտի-հակառակ շեղումներ: Ար մեղադրեն զինքը կարգ մը անիրաւ անտարբերութիւններու մէջ. մանաւանդ իբր թէ չափազանց ձկուն, յեղ-յեղուկ, թուշտուն ու անվճռական նկարագրի տէր էր: Արտաքին քաղաքականութեան մէջ յանդգնութիւնը կը պակսէր իրեն, որ չէր կրնար զօրել հանգամանքները վերջապէս կը քննադատեն զինքը որ իր թուրութիւնով ձգեց Պիզմարքը որ առաջ անցնի:

Թերևս իր ընկերական լայն հայեացքները պետական նենգութեան անընդունակ կընէին զայն:

Յեղափոխական մըն էր ինքը:

Եւ միակ պետական անձնաւորութիւնն եղած է որ ջանադիր եղած է քաղաքականութիւնը սրտի ու զգացումի հովանաւորութեան տակ դնել երբ Պիզմարք սուրին ծայրը պըրած էր:

Մեծ ծերունին եղաւ բարի, վեհ ու ազնիւ: «Հոյակապ մեկուսացող» մը չէր. մարդկային բարօրութեան համար մտածող մահկանացուներէն էր. թերևս եթէ իրեն յանձնէր աշխարհը քառորդ դարու մէջ կերպարանափոխ ընէր: Չեղաւ այն կծու ու կարծր անգլիացի պետական մարդիկներէն որոնց համար իրաւօրէն կըսէր Վորտօն փաշան. «Մենք (անգլիացիք) պարկեշտ ազգ ենք, բայց մեր դիւանագէտները նենգամիտ ու պաշտօնապէս ոչ պարկեշտ»:

Ալատսոն իր ձիգ գոյութեան մէջ մաքառեցաւ դասակարգային յաւանութեան դէմ, և ըրտերու խորհրդարանին, որուն կարեւոր — եթէ ոչ մահացու — կրօնփր տաւ: Պապի յաւանութիւնները խարազանեց ամբողջ պապական գերիշխանութիւնը իր ստեղծած սիլվապիւսին (մոլորութիւններու ցանկ) մէջ խօթելով:

Մինչև վերջ մնաց պարզ քաղքցի և honest fellow: Ամէնքը կը հիանան իր վրայ, կըսէ օրագրող մը, բայց, կզուշանան իրեն հետեւէ: Բրիտանական միացող կղզիին մէջէն քաղաքական իտէպի ասպետը հեռուն կը նայէր, և սորվելով կը ծերանար. «Պետական մարդ մը կըսէր, ստիպած է իր դարու գաղափարական շարժման հետեւիլ»:

Ալատսոն մարդկութեան կոչումին համապատասխան

դիրք մը կը բռնէր կարելի եղածին չափ:

Իր մահը հանրային աղէտ մեղաւ, ինչպէս շատ մը թագ ու պսակ շալկողներու գոյութիւնը:

Որքան ասպարեզ կառնէր կեանքի մէջ այնքան աշխարհայեցողութիւնը կը լայնար: Չեռք երկնցուց Իրլանտայի, որ քաղաքակիրթ Անգլիոյ կշտին վրայ խոց մըն էր: Սովը, անարդարութիւնը մարտիրոսներու դաշտի մը վերածած էին վաղեմի սուրբերու կղզին: Դրժբախդ Իրլանտան, ոչ իր ձերմակ մանչերու, ոչ լուսնկտորներու (moon-lighters) ահաբեկութիւններով, ոչ Ֆէնիքսի բռնութեամբ կամ պարբերական ապստամբութիւններով, չկրցաւ խուսափիլ բարեպաշտ Անգլիոյ անխղճութենէն, և իր վիճակը միշտ կապած մնաց փտած գետնախնձորի թափուքին...

Բարնէլ խորհրդարանին մէջ հազիւ իր խափանարար վարպետ ռազմութիւնով յաջողեցաւ հոգեւոր Իրլանտան նկատի առնել տալ: Բայց իր գայթակղոտ վերջաւորութիւնով սպաննեց իր ճարպիկ ծրագիրը: Ալատսոն Անգլիոյ համբաւին նախանձախնդիր, իր բոլոր կորովով յուզեց Իրլանտայի խնդիրը, որ իր կեանքի փայլուն հատածը կը կազմէ, և 1886-ին, առաջարկեց որ Իրլանտային ինքնօրինութիւն սուրի: Իրլանտայի ծրագիրը, Ալատսոնի տարպեան ժայռը եղաւ թերևս: Սակայն մեծ ծերունին ճիգերը, սրահանումները, անպտուղ չմնացին: Պահպանողական հակամարտ կուսակցութիւնը, վերջապէս քանի մը ամիս առաջ, Իրլանտայի պահանջներուն մասամբ գոհացում տալու ծրագիր մը մշակեց:

Մահամերձ ծերունին, վերջի րօպէին Իրլանտայի իր բարեկամներուն կը գրէր թէ յաղթութիւնը կը շահին եթէ միացած մնան:

* *

Ալատսոն Թիւրքիոյ անողոր թշնամին էր: Ոմանք կարծեցին թէ կրօնական աններող ոգիէ մը թելագրուած էր մեծ ծերունին: Բայց, ազատական նախարարապետը, կը յայտարարէր թէ ինք իսլամութեան դէմ զինուած չէ, այլ թիւրք ցեղին դէմ, որուն հինգ դարու կենսագրութիւնը սփոփիչ ապացոյց մը չէր տար մարդը լլալու: Գիտէր քակել բայց ոչ շինել:

Ալատսոն պատմական ճշմարտութեան վրայ հիմնելով Թիւրքիոյ նկատմամբ կործանարար վարդապետութեան մը յանգած էր: Թէև, վերջերը, քիչ շատ իր կարծիքը բարեփոխեց, երբ նշմարեց թէ Թիւրքիոյ մէջ կան եղբր տարրեր որոնք կը ճգնին որպէսզի թիւրքը կոխած տեղը մինակ աւերակ չցանէ:

Անշուշտ Թիւրքիան, գոնէ վերջին տասնեակ տարիներուն մէջ, կարող էր իր աղու մարքել ընդհանաւ, ինչպէս կըսեն, քանի երեսը թքին՝ անձրև կուգայ ըսաւ: Կարծես կորստաբեր անողոր բնագը մը կուրօրէն և վայրագօրէն ոչնչութեան կլափին մէջ կը քշէ զինքը:

Պուլխարիոյ կոտորածներուն ատեն — Միջհատի ազատ վարչութեան օրով — Մեծ ծերունին թէ գրեով և թէ բորբոքուն ձառերով հանրային կարծիքը գըրգուեց և առաջարկեց խորհրդարանին որ «Թիւրքիան Անգլիոյ բարոյական ու նիւթական պաշտպանութենէն զրկուի»: Մինչդեռ Պիքընսֆիլտ կաշխատէր մոլթերով վեր

բռնել զանի. . . տեսակ մը խրտուիլակ զոր կը փափաքէր
դոնէ կայնուկ քնացնել. . .

Մտքով աշխոյժ, բայց մօտ դարու մը ծանրութեան
տակ ֆիզիքապէս յոգնած ու ընկճած, քաղաքական
ասպարէզէն վերջնապէս քաշեցաւ, անձարակ ու տար-

տամ Ռօզպէրիին յանձնելով ազատական դահլիճը:
Հավարտընի կեանքի մեկուսացման մէջ մեծ մարդա-
սէրը անտառին մէջ ծառեր կտրուելով կանցնէր իր օ-
րերը. միայն թէ Յօրիերին փայտահարին հակառակ
կեանքը կը հետապնդէր. . . ինչպէս ժամուկները թի-
թեռնիկները: Այդ բնապաշտ կեանքը իրեն թելագրեց,
սա սիրուն և սրամիտ առածը. «պէտք է, կըսէր, ջար-
դել ծառերը անտառը ապրեցնելու համար»: Թերևս
ծերունի փայտահարը իբր խորհրդանշան կուզէր գործա-
ծել իր տապալը. . .

Երբ սուլթան Համիտ պուլիարական ջարդերէն համ
առած, նոյն ծրագիրը աւելի դիւպլին կերպով կը գոր-
ծադրէր ավերող հայութեան վրայ, երբ մէկ քանի թա-
գակիրներու դաւաճան մեղսակցութիւնով փատիշահը
կը ջանար իր խտտածէս մարմինը հոգևորել հայերու
արիւնին մէջ, անխոնջ ծերունին 96 սեպ. ամսուն խօ-
սեցաւ այն հոչակաւոր ձառը, որ դրոզեց Անգլիան և
կածկոտաց Եւրօպայի վրայ: Օսմ արիւնոնշտ խաղիֆա-
յին «Մեծ Մարդասպանը» գոչեց ահաւոր ծերունին,
և հովը ծաւալեց այդ չարաշուք անունը աշխարհի չորս
ծայրերը և պատմութեան էջերուն մէջ:

Վլատսդօնի կարապին երգն եղաւ մարդասիրական
այդ ձառը:

Իրաւ է, այդ սրտոտ ձառը չկատարեց այն դերը,
ինչ որ ըրաւ պուլիարական սարսափներու ատեն: Գոր-
ծը խօսքին չենկերացաւ, և քաղաքական անխղճութիւ-
նը, զոր դարավերջի հանգանակն ըրած էր Պիզմաքը,
թքեց միանգամայն մարդկային արժանապատուութեան,
ու զգացումին վրայ: Պերլինի վեհաժողովին «պարկեշտ
միջնորդը», Գերմանիոյ հօրիզօնէն դուրս խիղճը կօշիկ-
ներուն մէջ կը խծկէ արդէն:

Վլատսդօն և Պիզմաքը, դարուս ծայրը երկու խոր-
հրդաւոր հակապատկերներ են, տարբեր ուղղութիւնով,
տարբեր խտելով, մէկը հանրամարդկային գաղափարէն
ներշնչած, իր փառքը կանգնելով տիեզերական եր-
ջանկութեան ու ազատութեան հողին վրայ, միւսը «ա-
րիւնուշտ փառքի» ասպետը, որ սղմած իր խորին
մէջ կը մըմնայ՝ «ես, ես եմ»: Աշխարհը կողբայ մար-
դասէր ծերունիին մահը, ինչպէս կը ցանկայ երկաթէ
նախարարին այս աշխարհէն օրառաջ հեռանալը:

Ժողովուրդներու սրտաբուխ համակրանքը Վլատսդօ-
նի դագաղին շուրջը Պիզմաքի եսական, եթէ կուզէր,
չնական սկզբունքին ջախջախիչ ուժանակն է: Չէ՛ կա-
րելի ըսել թէ Գերմանիոյ նախարարապետին այլասեռ
ու երկաթի դարի վարդապետութիւնը չէ հիմնուած
դարուս գիտական եզրակացութիւններուն ու հոգեբա-
նական տևող սկզբունքներու վրայ: Վախցնելը բաւա-
կան չէ այսօր կառավարելու համար, պէտք է ապա-
հով ալ ըլլալ: Երբ մարդկութեան մէջ շատ մը բը-
նագոյններ կը մարին արդէն ու նոր, համերաշխ գաղա-
փարներու արշաւըսն է որ կը ձերմիկ, երբ «մշար-
տութիւնը քայլ ելած է» արդէն, Պիզմաքը զուր կը
կզկնծայ որ աշխարհ իր սաղաւարտին առջև խոնարհի:
Վլատսդօնի բերնէն երբէք մարդկութեան սիրտը ծա-

կող խօսք մը չթռաւ: Այն ժայռը եղաւ որուն վրայ
արդարութիւնը շահէնի թւերով հանգչեցաւ:

Եեռաւ «քաջերու քաջը» ինչպէս կըսէր Ռօզպէրի-
նշանակելով ապրող սերունդին «մեռնելու ուղին»: Ոչ
միայն Անգլիա այլև բովանդակ աշխարհ կը կոր-
սնցնէ այն հոյակապ դէմքը որ կը փառաւորեն իրենց
երկիրն ու ապրած դարը:

Ինկաւ հինաւուրց կաղնին որուն շուքին տակ ապա-
ւէն կը գտնէին բռնութեան տակ հեծողները, տառա-
պողները ու լացողները:

Պիտի թաղին գինքը Ուէսդմիստրի արբայարանին
յաւիտենական լուսութեան մէջ:

To die — to sleep -- no more 1)

բայց իր խանդավառ մարդասիրութեան ջինջ յիշատա-
կը միշտ պիտի թւածէ դարուս մարդկային կատակեր-
գութեան վրայ, մինչև որ մարդիկ ըմբռնելով այս լայն-
կեկ հողագունդին վրայ ազատ ու երջանիկ ապրելու
իրաւունքը, կրկնեն անփոխարինելի մահկանացուն վեր-
ջին խօսքը՝ «բարութիւն, բարութիւն, բարութիւն. . .
ամէն տեղ բարութիւն»:

Խմբագրութիւնս Մեծ Ծերունիին մահուան գուժը
առնելուն իսկոյն հետևեալ ցաւակցական հեռագիրը
ղրկեց Տիկին Վլատսդօնին.

«Մեր բուն ու խորն վիշտը հաւաճուած ազգերու
Մեծ պաշտպանի յիշատակին:

Մ Ա Կ Է Դ Օ Ն Ի Ա

(ՄԻ ԲՕԼԳԱՐՍՅԻ ԸՆԿԵՐԻՑ)

«Դրօշակ»-ի անցեալ համարներէն մեկում հաղորդել
էինք արդէն Մակեդօնիայում եղած կոտորածի մասին,
որը հետևանք էր գաղան Բիթաղիմ բէյի սպանութեան:
Բազմաթիւ անմեղ բոլշարներ զոհ գնացին: Բոլշարա-
կան կառավարութիւնը ոչ թէ միայն չպաշտպանեց այդ
դժբաղդ զոհերին, այլ մինչև իսկ թոյլ տեց Սօֆիա-
յում գտնուող թիւրք կոմիսարին հերքել բոլշարական
կառավարչական օրգանում Մակեդօնիայի կոտորածնե-
րի մասին տարածուած լուրերը և յայտարարել որ մի-
միայն մի քանի ձերբակալութիւններ են եղել բայց ոչ
կոտորած: Թուլամեղ կառավարութիւնից, ի հարկէ, ա-
ւելի լաւ բան սպասելու չէր: Սակայն ժողովուրդը Բօլ-
շարիայում այն չէր մտածում, ինչ որ իր կառավարու-
թիւնը: Մակեդօնական կոտորածի լուրը առնելուն պէս,
բոլշարական բոլոր քաղաքներում ժողովարական միտնգ-
ներ գումարեցան բողոքելու համար թիւրքաց գաղա-
նութիւնների դէմ: միևնոյն ժամանակ որոշում կայացաւ
բողոքել իրենց սեփական կառավարութեան անգործու-
թեան և անհոգութեան դէմ: Ժողովուրդը այդ ազնիւ-
ընթացքով մասամբ կատարեց իր պարտականութիւնը:
Բայց միթէ բաւական են սոսկ ցոյցերն ու բողոքները. . .

1) Միւսնիւ ընտնաւ ոչ աւելի:

Ո՞ր կառավարութիւնն է այսօր անկեղծօրէն խնամք տանում իր հպատակ ժողովրդի կամ հաւատակիցներին բարորութեան մասին: Ամէն տեղ ինքը ժողովուրդն է, որ իր բարիւնտուած բազուկներով նւաճում է իր ազատութիւնը: Ներկայ դիպակում Բօլզար ժողովուրդը չպէտք էր սահմանափակէր միայն շանթալից ճառերով, այլ զէնքը ձեռքին պէտք էր հրապարակ դուրս գար, եթէ յիշուի թանկ էր նրան մակէղօնական ազատութիւնը: Կառավարութիւնը կամ միմիտրները իրենց փառաւոր դահլիճներից չէին լսում կամ չէին ուզում լսել իրենց ժողովրդի աղաղակները և հարազատ եղբայրների լացն ու կոծը Մակէղօնիայում: Նրանք դրանով շատ քիչ են հետաքրքրուած Սակայն այդ պայրելի անտարբերութիւնը չափ ուներ Տեսնելով որ բոլորքս ժողովուրդը խիստ է արդէն ալեկոծուած, կառավարութիւնը իր վարկը կորցնելու ահից դրդւած՝ ուղարկեց սուլթանին մի յիշատակագիր, որի մէջ պահանջում էր ադատել անմեղ ձերբակալւածներին, և պաշտօնանկ անել վալիին ու մի քանի ծառայողներին, որոնք գազանութիւններին մասնակից էին եղել: Սուլթանը նշանակեց դատաստանական յանձնաժողով: Հետևանքն այն եղաւ, որ բոլորներին մէկին մահուան դատապարտեցին, 11 հոգու 15 տարով բանտարկութեան, մի քանի ուրիշներին ևս աւելի քիչ ժամանակով: Այդպէս վերջացաւ մակէղօնական այդ տխուր պատմութիւնը:

Գուցէ հետաքրքիր ընթերցողը հարցնէ. յի՞նչ է անում արդեօք Մակէղօնական Բարձրագոյն Կոմիտէն, որի նիստն է Սօփիայում և որը այնքան աղաղակ էր հանում: Դրան կը պատասխանենք, որ այդ Կոմիտէն քնած է, կամ, կարելի է ասել, որ այն օրից, երբ մեռաւ մակէղօնական անմոռաց գործիչ Կիտանչէվը — մեռաւ նրա հետ և Կոմիտէն: Մակէղօնական Կոմիտէն ոչինչ չձեռնարկեց յօգուտ տառապող ժողովուրդին, որի անունով կազմւել է նա. դժբաղդաբար մի քանի նշաններից երևում է, որ այդ Կոմիտէն կոչւած է միայն գործիք լինելու բոլորքս կառավարութեան ձեռքին:

Մի քանի խօսք ևս երկու ուրիշ Կոմիտէների մասին, այդ երկուսը կապ չունին վերը յիշած Կոմիտէի հետ: Մէկը դրանցից ունի իր օրդանը «Սարանժա» անունով: Այդ Կոմիտէն իսկապէս ձգտում է ազատութիւն ու ինքնավարութիւն ձեռք բերել միմիայն Օդրինեան վիլայէթի համար, ամբողջ Մակէղօնիայի ազատուած նրա համար երկրորդական նպատակ է: Երկրորդ Կոմիտէն, որի օրդանը կոչւում է «Քաղաքական Ազատութիւն», նորերս հիմնեց սօցիալիստական ծրագրով նպատակը՝ Մակէղօնիայի քաղաքական և տնտեսական ազատութիւնը: Նրա նշանաբաններն են՝ «Մակէղօնիայի ազատութիւնը նոյն իրենց մակէղօնացիների գործն է», «Ժողովրդի միջոցով և ժողովրդի համար» և «Մակէղօնիան մակէղօնացիներին»:

Յրկու վերջին Կոմիտէները գործում են բաւական եռանդով և ունին կազմակերպութիւններ թէ Բօլզարիայում, թէ Մակէղօնիայում:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ը Ն

ԽՍՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ Ստացած է՝

Լուստօնէն Եազ. 7 շեւէն, Բելիկայէն չայրնասաւր մը 5 շը., Ժընեւէն Ոսմ 3 շը.,

ԿԻՊՐՕՍ Լաւնաքա քաղաքէն՝

Լուսինան խմբի երկու ամուսայ անդամավճարներ: Կնարո, Արամ, Սիսակ, Արեժ, Սուր, Ոսմ մէյսէկ շեւէն Գումար 6 շեւէն:

ՆԱԽԱՅԱՆԳԻՍՏԻ Կօմիտէն՝

Կարմիր քաղաքէն Ինիլիանիկ 200 ռուբլի, Եասէն. օղի Եասէն 35 ռ., Ամբրե 30 ռ., Եգիպտացի 800 ռ., Արամ 5 ռ., Յակոբ 70 ռ., Մանգումէ 75 ռ., Ժարիկ 100 ռ., Գործի օգնական 100 Կարիկ քաղաքէն Յ. Բ. 50 ռուբլի: Կոյս քաղաքէն Եաւարը 10 ռ., Գուրգէն 10 ռ., Բնիսամին 5 ռ., Արտաշէս 3 ռ., Գարեգին 3 ռ., Ալօ 2 ռ., Արէէ 2 ռ.:

ՏԱՊԱՐԻ Կեդր. Կօմիտէն՝

Սուլիշ շը. 35 դահնկան, Զովէժ շը. 27 դհ., Ռշաունիաց շը. 25 դհ., Գեղձուկ 10 դհ., Եփոթ 10 դհ., Կոուփ 30 դհ., Պերժ 20 դհ.:

ՊԱԼԵՍՏԻՆԱՆ Կեդր. Կօմիտէն՝

Հովիտ քաղաք 1897 Նոյ 14 — 1898 փետրար 15, Փետուր խումբէն 32 լէվ, Ե. Գ. — էն Նւէր 2 լէվ, Ա. Ն. 2 լէվ, Բլուրէն 14 լէվ 35 սանթիկ, Գանձանակէն 15 լէվ 30 ս.:

Ն. քաղաք Վահանէն 2 լէվ, Լուսինէն 10 լէվ, Արարամեան, 5 լէվ, Թորշ խ. — է Ա. Մ. 1 լէվ, Հ. Ժ. 1 լէվ, Կ. 2 լէվ, Ա. Մ. 2 լէվ, Արին Ն. 12 լէվ Մ. Դ. 2 լէվ, Մ. Մ. 6 լէվ, Ա. Մ. 4 լէվ 50 սանթիկ, Մ. Մ. 6 լէվ, Ն. Գ. 2 լէվ, Մ. Ա. 5 լէվ, Ա. 2. 5 լէվ, Բարցախ 1 լէվ Ա. Կ. կամած 1 լէվ 50 ս., Մ. Դ. Բ. 4 լէվ, Ա. Ն. Բ. 4 լէվ, Վարդանէն 2 լէվ, Ա. Ա. 2 լէվ, Մ. Ժ. 1 լէվ, Պրէկէն 3 լէվ 20 ս., Փետուր խ. — էն Գ. 1 լէվ, Մ. Գ. 1 լէվ, Հայկ Մ. 2 լէվ, Միւրքն Գ. Մ. 2 լէվ, Թ. Փաիկ 3 լէվ 60 ս., Պարթ 3 լէվ, Ն. 1 լէվ Թմբուկ 2 լէվ, Յ. 1 լէվ, Թ. 1 լէվ 60 ս.:

Գետափէն՝ Նոր Աշխարհ խ. 6 լէվ, Գաթաբուր 6 Լ. Ուժանակ խ. 3 լէվ, Գափիկ խ. 6 լէվ, Գազիկ խ. 6 լէվ, Գրիզոր Ա. Նուշ Լ. քաղաքէն 5 լէվ, Գանձանակայ խ. 14 լէվ, Վաստուրական խ. 12 լէվ ու կէս: Գումար 58 ու կէս:

Վեշ. քաղաքի «Մաս» կօմիտէն ստացած է՝ Մօսին խումբ 18 դահնկան, Արբակ խ. 40 դհ., Արծիւ խ. 20 դ.:

ՎՐԻՊԱԿ — Դրօշակի Որ 3-ի Ոսկեանք Կօմիտէն «Հ. Ե.», քաղաքի Նիքիտուութիւնն ցանկը սկսւածուք Որ 4-ի մէջ կըրկուսած է: 2.) 4-ում տարած է նոյն կօմիտէն Ամիսանքէն Վահանէն 60 դհ., պէտք է լինի 40 դհ.:

ԼՈՅՍ ՑԵՍԱԻ

„Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Կ Ն Ե Ր Ի Ն“

(ԹԱՐԳ. ԿՐԱՆՍԵՐՆԻՅՈՅ)

Հ. Յ. Գաշնակցութեան Կօմիտէ չեղած տեղերից դիմել խմբագրութեան: